«ՌԱՆՉՊԱՐ» ՏԵՐՄԻՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«Ռանչպար» պարսկերեն բառը հայերեն բացատրվել է «երկրագործ», «աշխատավոր», «հողագործ», «մշակ»[1], իսկ ռուսերեն՝ «трудящийся», «несущий бремя», «работник»[2] բառերով։ Հասկանալի է, որ սույն բացատրությամբ չի ենթադրվում պատմական վավերագրերում հանդիպող այդ բառերի միանշանակ ընթերցում։ Հենց միայն «երկրագործ—трудящийся—մշակ» զուգադրությունն այստեղ, մեր կարծիքով, ներկայացնում է ոչ այնքան «ռանչպար» բառի «տառացի նշանակությունը»[3] կամ «տառացի թարգմանությունը»[4], որքան նրա լայնիմաստ և նեղիմաստ գործադրումների հնարավորությունը։ Ուրիշ խոսքով՝ այս բացատրությունը նշված բառ-անվանումներով հիշատակվող աշխատավորների սոցիալական դեմքի որոշումը թողնում է կոնկրետ փաստերին և հետազոտողին։ Պատմագիտական գրականության մեջ տուշ միջնադարի և XIX դ. առաջին կեսի վերաբերմամբ կա «ռանչպար» տերմինի նեղ սոցիալական բովանդակությունը հայտանշող մի մեկնաբանություն, որը մնալով այլազան փաստերի ընթերցման միակ ելակետ՝ հանգեցրել է տարբեր երևույթներ համահարթող ընդհանրացումների։

Ըստ Ի. Պետրուշևսկու, XVIII դ. երկրորդ կեսի—XIX դ. սկզբի անդրկովկասյան խանություններում «ռանչպար» տերմինը հայտնի էր երկու նշանակությամբ. այդպես էին կոչվում ա) բնավարձակալները, որոնց Երևանի և Նախիջևանի խանություններում կարելի էր հանդիպել յարիքյար (կիսրար) անունով, բ) իրենց տերերից անձնական (ոչ թե հողակալությամբ պայմանավորված) կախման մեջ գտնվող և բացառապես նրանց տնտեսություններում աշխատող առանձին կատեգորիայի գյուղացիները[5]։ Այս տարբերակումն ընդգծում է երկրորդ խմբի մարդկանց կատարյալ ընչազրկությունը։ Նրանք, չունենալով ինքնուրույն տնտեսավարման հնարավորություններ, խաներից, բեգերից և այլ հողատերերից «ստանալով բանող անասուններ և տնտեսական ինվենտար»[6], լծվում էին ծանր աշխատանքի և վարձատրվում նվազագույն կենսամիջոցներով՝ սովորաբար բերքի 1/3-ով[7]։ XIXդ. սկզբին Երևանի խանու-

---

1 Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Երևան, 1945, էջ 157։

2 С. Зелинский, Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов, Тифлис, 1889. с. 56; И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, с. 248.

3 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248։

4 Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերություններն Արարատյան երկրում XVII—XVIII դդ. և XIX դ. առաջին քառորդում, Երևան, 1959, էջ 245։

5 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248, 309—310, 316։

6 В. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 134—135.

7 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 19։

թյունում տարաբնակ ռանչպարներից բացի, կային զուտ ռանչպարական վեց գյուղեր (խանական, մզկիթապատկան և մասնատիրական)[8], իսկ առհասարակ Արևելյան Հայաստանում «ռանչպարական աշխատանքի օգտագործումը մեծ ծավալ էր ստացել»[9]։

Անհասկանալի է, թե ինչու Ի. Պետրուշևսկին մի դեպքում ռանչպարների աշխատանքն օգտագործող տնտեսությունների «գոյությունը» մատնանշել է լոկ Ղուրայի խանությունում, մեկ այլ դեպքում՝ նաև Ղարաբաղում, մինչդեռ ռանչպարությունը, իրավամբ, փաստարկել է Արևելյան Անդրկովկասի այլ շրջաններից ևս[10]։ «Ռանչպար» տերմինի նրա բացատրությունը մշուշվել է հետևյալ տողերում. «ռանչպարները Երևանի խանությունում սկզբնապես միայն գյուղացի-կիսրարներ էին, XVIII դ. վերջին գտնվում էին անձնական ճորտական կախման մեջ»[11]։ Դժվար է կռահել՝ այդ կիսրարները սակավազոր ինքնուրույն տնտեսատերեր էին, թե՞ ամբողջովին ուրիշների մոտ աշխատող տնտեսագուրկներ, կամ արդյո՞ք այստեղ խոսքը կիսրարությունից ռանչպարության անցնելու մասին է։ Համենայնդեպս տարակուսելի է դառնում տընտեսաղուրկ-ռանչպարների գոյությունը մինչև XVIII դ. վերջը, մանավանդ որ Ի. Պետրուշևսկին այդ անվան տակ նկատի է ունեցել «տերերից անձնական կախման մեջ գտնվող» մարդկանց։

Կարիք չկա ապացուցելու, որ գյուղացիների որոշ մասի ընչազրկումն ու անցումը ռանչպարության տեղի է ունեցել և՛ մինչև XVIII դ. վերջը[12], և՛ հետո, այն էլ՝ ոչ անպայման կիսրարության միջնորդակով։ Երբ Ի. Պետրուշևսկին արձանագրել է այս իրողությունը, ռանչպարների անձնական կախումն էլ, հակառակ իր նախորդ դրույթի, ներկայացրել է ավելի քան երեքհարյուր տարվա պատմությամբ. «անձնապես կախյալ մարդկանց այդպիսի խմբերի գոյությունը քիչ թե շատ ընդհանուր երևույթ էր... նաև շահական տիրակալության շրջանի (XVI դ.—XVIII դ. առաջին կեսի) անդրկովկասյան բոլոր խանությունների համար»[13]։

Յարիքյարների՝ իբրև որոշակի կարգի գյուղացիների, «ռանչպար» անվանումը փաստապես հավաստված չէ, այլ արձագանքն է նախասովետական կովկասագիտության մեջ տարածված մի կարծիքի։ Ըստ այնմ՝ տարբեր տեղերից Երևանի խանություն եկած գաղթականները, փախստականները, թափառաշրջիկները, բնակեցվելով ազատ հողերում, կազմում էին յարիքյարական գյուղեր, եթե վերաբնակվելիս սեփական տնտեսություններ էին ստեղծում (սարդարի հատուցվող օժանդակությամբ) և՛ ռանչպարական գյուղեր,

---

8 Նույն տեղում։

9 Հ. Փափազյանի ծանոթագրություններից՝ Լեոյի «Հայոց պատմության» II հատորի 1 գրքին (Երևան, 1969, էջ 482—483)։

10 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248, 316—320։

11 Նույն տեղում, էջ 319։

12 А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв., Ереван, 1972, с. 206—207, «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 265։

13 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 320։ Ռանչպարների սոցիալ-իրավական դրությունը քննելու ենք առանձին։

եթե սեփական տնտեսություններ չունեին[14]։ Ի. Շոպենից[15] ժառանգված այս բացատրությունը ստվերել է երևույթների սոցիալ-տնտեսական հիմքերը։ Առաջին հերթին ընդգծվել է, որ յարիքյարներն ու ռանչպարները, հիմնական զանգվածներով, միևնույն «այլերկրացի» վերաբնակիչներն էին (չնայած երբեմն հարևանցիորեն ակնարկվել է տեղաբնիկ ռայաթներից ոմանց անցումը ռանչպարության)[16]։ Այդ ելակետից առաջ գնալով, Ս. Զելինսկին վերոհիշյալ գյուղերը ներկայացրել է «ռանչպարական-յարիքյարական» և «ռանչպարական» խմբերով, իսկ «յարիքյար» բառը բացատրել է այսպես. «կիսրար—այդպես էին կոչվում... ռանչպարները (այլ պրովինցիաներից գաղթած եկվորները)»[17]։ Այս նույնացման հիմքը «դրսեկ-այլերկրացի» ընդհանուր հասկացությունն էր։

Սովետական հետազոտողներից Ս. Մարկոսյանը հերքել է այդ բացատրությունը՝ վկայաբերելով Երևանի խանության հնաբնակ յարիքյարներին ու ռանչպարներին վերաբերող փաստեր։ Նա իրավացիորեն ընդգծել է յարիքյարության և ռանչպարության՝ իբրև ագրարային կյանքի ծնունդ հանդիսացող ինքնակա երևույթների, լինելիությունը խանություններում՝ անկախ գաղթականների վերաբնակեցումներից[18]։ Այս հիմքով տերմինների մեկնաբանության ելակետ է մնում յարիքյար և ռանչպար գյուղացիների տնտեսական կացության և շահագործման աստիճանների տարբերակումը։

Սովետահայ պատմագիտական գրականության մեջ «ռանչպար» անվանումը վերապահվել է այլոց տնտեսություններում աշխատող ընչազուրկներին[19] և չի վիճարկվել ամբողջովին ռանչպարական (արքունի և մուլքադարական) ու յարիքյարական (արքունի, արքունի-մուլքագարական, մուլքադարական) գյուղերի գոյությունն Արևելյան Հայաստանում։

Բայց արդյո՞ք XVIII դ. երկրորդ կեսին—XIX դ. սկզբին «ռանչպար» տերմինը հայտնի էր միայն սոցիալական մի նեղ բովանդակությամբ։ Եղած մեկնաբանություններից պետք է եզրակացնել, որ այն իր լայն, այսպես կոչված «տառացի» նշանակությամբ[20] (առհասարակ «աշխատավոր—трудящийся» և ոչ անպայման՝ տնտեսազուրկ) կամ «տեխնիկական» իմաստով («երկրագործ»)[21] իրական-գործառական չէր։

---

14 В. Иваненко, նշվ. աշխ., էջ 228. հմմտ. И. Бахтадзе, Податное обложение государственных крестьян Закавказского края («Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, ч. III, Тифлис, 1887, с. 22); С. Зелинский, նշվ. աշխ., էջ 56։

15 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, с 988—989.

16 С. Зелинскии, նշվ. աշխ., էջ 56։

17 Նույն տեղում, էջ 84։

18 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 235—239, 253—262։

19 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 19։ Ավելի ճիշտ է «ռանչպարները մեծ մասամբ հողից և արտադրության միջոցներից զրկված հողագործներ էին...» բնորոշումը («Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 265. ընդգծումը մերն է—Ս. Ա.), որչափ բացառված չէ նաև սակավ միջոցների տեր որոշ ծխերի ռանչպարությունը։ Հմմտ.՝ И. Гасанов, Из истории феодальных отношений в Азербайджане. Ранджбары в XIX веке («Труды Института истории и философии АН Азербайджанской ССР», т. IX, Баку, 1956, с. 61, 65—66).

20 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248։

21 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 233։

Մենք այլ կարծիքի ենք, և մեր հարցադրումը մասամբ թելադրվում է Ի. Պետրուշևսկու այն եզրակացությամբ, թե ռանչպարների շարքերը համալրվում էին ոչ միայն «այլերկրացիներով» և ժառանգական ռանչպարներով, այլև խանի հասարակ հրամանով ամեն մի ռայաթ կարող էր դառնալ ռանչպար և նվիրվել այս կամ այն ծառայող մարդուն[22]։ Այս առթիվ վկայակոչված 1800—1820-ական թվականների վավերագրերը տարբեր բովանդակություն ունեն. ա) բեգը կարող էր իրեն պատկանող յուրաքանչյուր գյուղից պահանջել առնվազն մեկական ընտանիք ռանչպար, բ) խանի հրամանով գեղջավագները գյուղացիներից ռանչպարներ էին կարգագրում ու տալիս բարձրաստիճան մարդկանց, գ) խաներն «իրենց պատկանող ռանչպարներից» ոմանց առանձնաշնորհում էին մերձավորներին և ծառայանուն»[23]։ Միաժամանակ Ի. Պետրուշևսկին հաստատել է մի իրողություն՝ «ի տարբերություն ռայաթների, ռանչպարները գյուղական համայնքի կազմի մեջ չէին մտնում»[24], այսինքն՝ չէին օգտվում համայնական հողից ու ջրից, չունեին համայնիկ տնտեսատիրոջ իրավունքներ ու պարտականություններ։

Նախ, որտե՞ղ պետք է տեսնել ռանչպարության սկիզբը՝ մինչև այդ վիճակի ժառանգական դառնալը։ Ըստ Ի. Պետրուշևսկու ամփոփման, պետք է ենթադրել, որ ժառանգական ռանչպարների նախորդները կամ «այլերկրացիներ» էին, կամ էլ՝ ռանչպարության հրամանագրված ռայաթներ։ Բայց չենք կարող պատկերացնել, որ ռայաթ համայնիկը ընչազրկվում էր ու հանվում համայնքից խանի հրամանով կամ բեգին վերապահված իրավունքի կենսագործմամբ։ Նման ենթադրությունը կհանգեցներ գյուղացիության սոցիալ-իրավական վիճակի թյուրըմբռնման։ Ֆեոդալական շահագործման հետևանքով տնտեսապես հյուծված գյուղացիներն անցնում էին ռանչպարության՝ իսպառ կորցնելով ինքնուրույն տնտեսավարման և պարզ վերարտադրության հնարավորությունները։ Այդ երևույթը չէր սկզբնավորվում հրամանագրով, իսկ «այլերկրացիները» խտացնում էին գյուղացիության տվյալ խմբի շարքերն այնտեղ, ուր հանգրվանում էին։ Խանի հրամանով ոչ թե երեկվա ռայաթն էր մեկեն դառնում ռանչպար, այլ առանձնաշնորհվում էր արդեն ռանչպարական վիճակում գտնվող գյուղացին՝ խանական ռանչպարական գյուղերի բնակիչներից, տարաբնակ ռանչպարներից։ Ուստի, մի խումբ վավերագրերում խոսքը «իրենց՝ խաներին պատկանող ռանչպարների» առանձնաշնորհման մասին է։ Ի դեպ, ռանչպարատիրությունը պայմանավորված չէր միայն խանական շնորհումներով, ոչ էլ՝ դասային աբստոնություն էր. ունևորներն իրենք էլ կարող էին ռանչպարության ընդունել տեղացի և դրսեկ ընչազուրկներից։

Մեր կարծիքով, անիմաստ պետք է լիներ գյուղից ռանչպար պահանջելու բեգի իրավունքը, եթե պահանջվողը համայնքի կազմի մեջ չէր մտնում, իսկ գեղջավագները չէին կարող ունենալ արտահամայնական ինչ-որ պահեստի աշխատուժ՝ ռանչպար կարգագրելու համար։ Ճիշտ է, խանը գյուղական կառավարիչներ նշանակելիս նրանց համար «զատում էր մշտապես աշխատող» ռանչպարներ[25]։ Եթե այստեղ նկատի ունենանք միայն ընչազուրկներին, պետք

22 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 316։

23 Նույն տեղում, էջ 316—319։

24 Նույն տեղում, էջ 317։

25 Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 80, հմմտ. «Колониальная политика российского царизма в Азербайджане в 20—60-х годах XIX в.», М.—Л., 1936, ч. I, с. 104.

է ասենք, որ խանը շնորհում էր էլի իրեն պատկանող ռանչպարներից։ Բայց որչափ խոսքը մի ընդհանուր կարգի և գյուղը կառավարողի իրավունքի մասին է՝ «ռանչպար» տերմինը արդեն պետք է ընթերցվի այլ իմաստով։ Կարգն այն էր, որ կառավարիչ բեգերին և մահալների հոգևոր պետերին ռայաթ-համայնիկներից տրամադրվում էին «մշտապես» աշխատող-ռանչպարներ՝ ազատելով նրանց համապատասխան արքունի հարկաբաժնից։ Ուստի. վավերագրերում ռանչպար տալը հիշատակվում է գյուղական համայնքի մյուս բոլոր պարտավորությունների շարքում՝ սկսած մալչահաթից (հողարդյունքի $^1/_{10}$-ը), վերջացրած բեգի հյուրերին տրվող նվերներով[26]։ Վ. Ռշտունին իրավացիորեն ակնարկել է գյուղացիների աշխատավճարումները՝ նշելով. որ նրանք էվրեզից (որոշակի չափի գեղովի աշխատանքից) բացի, բեգին տալիս էին ռանչպարներ[27]։ Բայց վերջիններս «ռանչպար անունով հայտնի... հողազուրկ գյուղացիների» շերտ չէին կազմում, ինչպես թվացել է Վ. Ռշտունուն[28], Ի. Պետրուշևսկուն և այլոց։ Անտեսվել է մեկ այլ վիճակ, երբ «ռանչպարները շարունակում էին մնալ իրենց համայնքներում և տարբերվում էին համագյուղացիներից այնքանով, որքանով ազատ էին հարկից, այն էլ՝ հազվադեպ. մեծ մասը, ընդհակառակը, հարկատու էր»[29]։ Ըստ էության, գործ ունենք համայնիկ շինականի պետական հարկաբաժնի փոխակերպված մասնավոր յուրացման հետ։ Շնորհյալի ցանկությամբ աշխատավճարը (եթե դրա խիստ կարիքը նա չուներ) կարող էր ինչ-ինչ համամասնությամբ փոխարինվել դրամատուրքով և բնատուրքով։ Ուստի, շփոթություն չպետք է առաջացնի որոշ վավերագրերում «բեգական ռանչպարների ստորաբաժանումը երեք կարգի»[30], որն արտացոլում է լոկ վճարման տեսքի ու չափերի տարբերությունները։ Ոմանք «բեգերին տալիս էին որոշակի հարկ և կատարում որոշակի չափի տարբեր աշխատանքներ, մյուսները վճարում էին միայն դրամատուրք՝ ազատվելով անձնական ծառայություններից, ոմանք էլ մշտապես զբաղված էին հողագործական աշխատանքներով և դրամատուրք չէին վճարում»[31]։ Հատկապես ծանր էր աշխատավճարը։ Ի. Պետրուշևսկու հրատարակած (և անուշադրության մատնված) 1837 թ. մի վավերագրում կարդում ենք. «Ամենադժբախտ վիճակներից մեկը ռանչպարականն էր... հաճախ էր պատահում, որ մի քանի տարի հետո նրանք (ռանչպարության կարգադրվածները—Ս. Ա.) քայքայվում էին կատարելապես և... տերերը շահեկան չհամարելով այդպիսիններին պահելը, առիթ էին փնտրում նրանց փոխարինելու նորերով. եղել է ժամանակ, երբ նման փոխանակումները կատարվել են առանց որևէ դժվարության»[32]։ Զուր չէ նկատված նաև, որ բեգը ձգտում էր փոխարինել ռանչ-

---

26 «Колониальная политика российского царизма в Азербайджане», ч. I. с. 110, 458—460.

27 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 79։ Այս պարտավորությունը, ի թիվս այլոց, նորովի սահմանվեց Հայկական մարզի պետ Վ. Բեհրութովի կազմած 1836 թ. «Կանոնագրությամբ» (նույն տեղում, էջ 99, 103)։

28 Նույն տեղում, էջ 68—69, 80։

29 Քաղվածքը վավերագրից տե՛ս С. Авалиани, Крестьянский вопрос в Закавказье, т. III, Одесса, 1914, с. 151; Ц. Агаян, Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956, с. 83.

30 «Колониальная политика российского царизма в Азербайджане», ч. I, с. 104—105.

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 328։

պարին, երբ նա շարունակում էր ծառայել դժկամությամբ կամ՝ մտահոգված սեփական տնտեսության մասին, այլևս չէր ուզում ծառայել[33]։

Ռանչպարների փոխարինումը նորերով[34], որից հետո նախորդներն անցնում էին համայնիկի սովորական վիճակին[35], նույնպես վկայում է, որ նման դեպքերում խոսքն ընչազուրկ-ռանչպարների մասին չէր։ Նրանց «մշտական աշխատանքը», մեր կարծիքով, պետք է հասկանալ ոչ թե գյուղացու ժառանգական կամ ցմահ կախման, այլ պայմանականորեն անժամկետ, ոչ-միանվագ պարտավորության իմաստով։ Հիմք չունենք շրջանցելու մի կարևոր փաստ։ «Բեգն օգտվում էր ռանչպարի աշխատանքից, քանի դեռ գյուղի կառավարիչ էր... ժառանգական իրավունքով գյուղ կառավարող տոհմիկ բեգերը կարող էին ռանչպարներին փոխանցել իրենց որդիներին, բայց օտարելու իրավունք չունեին»[36]։ Սա համադրելով վերոհիշյալ տվյալներին, կարծում ենք, որ իրավականորեն փոխանցվում էր ոչ թե ռանչպարն անձամբ, այլ գյուղի ռանչպարական պարտավորությունը՝ անկախ տվյալ պահին դրա փաստական կրողներից։

Այսպիսով, ռանչպար էին կոչվում ոչ միայն ունևորների մոտ աշխատող տնտեսազուրկները (գյուղացիության առանձին կարգ), այլև «բարձր դասի» մարդկանց համար «մշտական» աշխատանքային պարտույթի կարգադրված համայնիկ տնտեսատերերը։ Վերջին դեպքում գործադրվելով իր «տառացի» (աշխատող, բանվոր) նշանակությամբ՝ տերմինն արտահայտել է նաև որոշակի սոցիալական հարաբերություն։

Այժմ դառնանք «ռանչպար»—«երկրագործ» և «ռանչպար»—«մշակ» զուգադրություններին։ Էջմիածնի վանքին հարկատու գյուղերի 1837 թ. «բնակագրման» ցուցակների «զբաղմունք» սյունակում բնակիչներից ոմանք հանվանե ներկայացված են ռանչպարներ, այդ թվում՝ Վաղարշապատից 20 համփա, 17 կիսահամփա, 43 չարեքհամփա և 8 «հասարակ բնակչաց» ընտանիքներ[37]։ Սրանց կողքին և այլ նյութերում ևս հիշատակվում են անգործ-աղքատներ, խեղճ—«բուդալաներ», վանքին ծառայագրված մշակներ[38]։ Մյուս ընտանիքները (վարելատեղ ունեցող և չունեցող) ներկայացված են արհեստների, տնային արհեստագործության և զբաղմունքի այլևայլ տեսակներով։ Պարզ է՝ դեռ մինչև XIX դ. 30-ական թվականները «ռանչպարը» գործառական է եղել նաև «տեխնիկական» իմաստով և ցույց տվել, որ Վաղարշապատի վերոհիշյալ 88 ծխերը հողագործությունից բացի այլ (բնորոշ) զբաղմունք չունեին։ Ուստի չենք կարող ընդունել, որ «ռանչպար» տերմինը միայն XIX դ. վերջին—XX դ. սկզբին է համապատասխանել «երկրագործին»[39]։ Ճիշտ է, XVIII դ. և XIX դ. 30—40-ական թվականներին ոչ բոլոր հողագործներն են կոչվել ռանչպար[40], բայց փաստ է, որ միայն ընչազուրկները չեն այդպես կոչվել։

---

33 Հ. Ավալիանի, նշվ. աշխ., էջ 152։

34 Այդ մասին նաև տե՛ս Ց. Աղայան, նշվ. աշխ., էջ 101—102։

35 Հ. Ավալիանի, նշվ. աշխ., էջ 153։

36 «Колониальная политика российского царизма в Азербайджане», ч. I, с. 104; Հ. Ավալիանի, նշվ. աշխ. էջ 151—152։

37 Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 56, էջմիածնի հոգևոր սինոդի տնտեսական մաս, թղթ. 1, վավ. 15։

38 Նույն տեղում, նաև ցուց. 11, թղթ. 2, վավ. 41, թ. 5—6, վավ. 51, թ. 8—9 և այլն։

39 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 233։

40 Նույն տեղում։

Ավելին, կարելի էր կարծել, թե տվյալ դեպքում «ռանչպարը» պետք է ավելի լայն գործառում ունենար, քանի որ մյուս վաղարշապատցիներից շատերն էլ, առաջին հերթին, երկրագործ էին, նոր միայն՝ գյուղատնտեսական հումք վերամշակողներ, պատշարներ, նալբանդներ, հյուսներ և այլն։ Մինչդեռ տերմինը գործադրվել է ավանդական—«մասնագիտական» զբաղմունք հայտանշելու առումով (թերևս նույնչափ էլ հին է «մարդը լավ ռանչպար է» արտահայտությունը)։ Համենայնդեպս, գյուղացիության առօրյան շատ ավելի բազմակողմ էր՝ ժամանակին մարդկանց գործելակերպը հարմարորեն տարբերող դիպուկ կամ պայմանական բնորոշումներով, քան կկարողանայինք այդ բոլորը սպառել տերմինների սահմանադիր մեկնաբանությամբ։

1766 թ. Սիմեոն կաթողիկոսը էջմիածնի համար գնած այգու փոխարեն տվել է 150 մշակ[41]։ Ըստ Ս. Մարկոսյանի, այստեղ «մշակը», բանվորական օրվա իմաստով, «ռանչպար» բառի տառացի թարգմանությունն է և «Սիմեոն Երևանցու բերանում... արտահայտում է «ռանչպար» հասկացողությունը», քանի որ «մշակություն անել» նշանակում է ուրիշի համար աշխատել»[42]։ Այս մեկնաբանությունը չի արդարացվում Ս. Մարկոսյանի ելակետային դրույթով, ըստ որի հենց XVIII դ. «ռանչպար» էին կոչվում սեփական տնտեսություններից, գույքից, նույնիսկ սեփական կացարանից զուրկ գյուղացիները[43]։

Չենք կարծում, թե թարգմանության ակնարկումով Ս. Մարկոսյանն անտեսել է «մշակի» անկախ օգտագործումը[44]։ Նրա խոսքը հասկացությունների նույնության մասին է։ Բայց տվյալ դեպքում չենք կարող պնդել, թե Սիմեոն Երևանցին 150 մշակ է տվել անպայման արտադրամիջոցներից զուրկ մարդկանց կամ, ասենք՝ էջմիածնի վանքի ամալա—մշակների[45] աշխատանքային օրերի հաշվին։ Ուրիշի համար աշխատելը՝ մշակությունը, պայմանավորված չէր միայն կատարյալ ընչազրկությամբ։ Տնտեսատեր գյուղացիների օժանդակ դատումները նույնպես մշակություն էին, հաճախ մշակությամբ էին մարվում տուրքապարտությունները, պարտքերը և այլն։ Եթե գյուղացիության մի կարգ կոչվում էր «ռանչպարական» (և ոչ «մշակական»), ապա դա հետևանք էր որոշակի նկատառումներով գյուղերի պաշտոնական ստորաբաժանման։ Մինչդեռ բնորոշ է, որ ուրիշի համար աշխատելը, անկախ աշխատողի սոցիալ-տնտեսական կացությունից, հայկական սկզբաղբյուրներն առավելապես ներկայացնում են «մշակ» և «մշակություն» տերմիններով։ Շատ հավանական է, որ կաթողիկոսը այգետիրոջ համար սովորական մարդ-օր էր վարձել։ Ս. Մարկոսյանը վկայակոչել է այս տվյալը՝ ապացուցելու համար, որ կալվածատիրական տնտեսությունները հենված էին բացառապես ռանչպարական, նրա մեկնաբանությամբ՝ ընչազուրկների աշխատանքի վրա[46]։ Մեր համոզմամբ,

---

41 «Ջամբռ», համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 167։

42 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 245։

43 Նույն տեղում, էջ 233։

44 «Մշակության» ինստիտուտը Հայաստանում հայտնի է ավելի վաղ ժամանակներից («Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 649—651, 798, հ. III, Երևան, 1976, էջ 250, 253, հ. IV, էջ 69։

45 Սրանց մասին տե՛ս Վ. Դիլոյան, էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին («Էջեր հայ ժողովրդի պատմության և բանահյուսության», Երևան, 1971, էջ 165—166)։

46 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 243—246։

«ռանչպար»—«մշակ» զուգադրությունը հաստատում է ավելին՝ տարաբնույթ աշխատանքների օգտագործման փաստը նման տնտեսություններում։

Ավելորդ չէ հիշել, որ «մշակությունը» միայն ուրիշի համար կատարվող վճարովի աշխատանք չէր։ «Մշակ» (մարդ օր), «մշակություն» բառերը գործառական էին նաև մարդկանց որոշակի սոցիալական փոխհարաբերության՝ կախյալ գյուղացիության աշխատավճար պարտավորությունների իմաստով։ Ըստ Էջմիածնի սինոդի 1837 թ. մարտի 17-ի «օրագրության», վաղարշապատցիները պարտավոր էին թաղել, բրել և էտել իրենց գյուղի վանքապատկան այգիները, իսկ Մաստարա գյուղի բնակիչները պետք է նրանց օգնեին 400 մշակներով կամ դրա փոխարեն վանքին տային 20 թուման[47]։ Տարբեր աշխատանքների համար մշակներ էին տալիս նաև Էջմիածնապատկան Օշական և Եղվարդ գյուղերը։ Վերը նշեցինք, որ նույն բնույթի սոցիալական հարաբերություն էր հատկանշվում «ռանչպար» տերմինի մի գործադրմամբ։

Ռանչպարությունը քննվել է նաև կալվածատիրական տնտեսություններում օգտագործվող աշխատուժի բնորոշման տեսանկյունից։ Պետք է համաձայնել Հ. Փափազյանի հետ, որ տակավին XVI—XVII դդ. ռանչպարությունը կալվածատերերի սեփական հողերի («մազրաե») մշակման միակ միջոցը չէր[48]։ Ս. Մարկոսյանն անհրաժեշտ է համարել «պարզել՝ արդյոք տրևէ կռվան կա՞ եզրակացնելու այդ կարգի (ռանչպարական—Ս. Ա.) գյուղացիության գոյության մասին XVII—XVIII դարերում, այլ կերպ ասած, արդյոք այդ ժամանակ ևս գոյություն ունեի՞ն ռանչպարական աշխատանքի վրա հենված տնտեսություններ»[49]։ Նրա կարծիքով, «հեղինակներից ոչ մեկը դժբախտաբար չի կատարել» այդ հարցի պարզաբանման փորձ[50]։ Այստեղ Ս. Մարկոսյանը բերել է տվյալներ Սիմեոն Երևանցու «Ջամբռից», որոնցով «կարելի է կռահել, որ ինչպես սարդարի ժամանակ, XVIII դարում ևս խաներն ունեին սեփական տնտեսություններ... մինչդեռ նման տնտեսություններ վարելու համար մենք այլ աշխատանք չենք տեսնում, բացի ռանչպարականը»[51]։ Սակայն XVII—XVIII դդ. ու նախորդ ժամանակներում ընչազրկված շինականների առկայությունն ապացուցելու համար հարկ չկար անպայման տվյալներ փնտրել հատկապես կալվածատիրական տնտեսությունների գոյության մասին, որոնք, ի դեպ, հենված չէին լոկ ռանչպարական աշխատանքի վրա։ Հիշենք գյուղացիների օժանդակ դատումներն օրավարձով, սեզոնով, «հացփորի» մշակությունը[52] և այլն։ Գուցե Ս. Մարկոսյանն այդ բոլորը խմբավորել է «ռանչպար-մշակ» անվան տակ՝ բառի լայնիմաստ գործադրմամբ։ Բայց կալվածատերերի տնտեսավարման համար դրսի աշխատանքն իրացնելու կերպափոխված ձևեր էին նաև արտադրամիջոցների կապալատվությունը, կիսարար օգտագործումը։ Վերջինս, օրինակ, երբեմն ուղեկցվում էր հողի յուրահատուկ անժամկետ իրավատիրմամբ։ 1771 թ. Խոր վիրապի վանքը Նորքի իր Ջարեքանոց այգետեղը տալիս է Նորքեցի Մարկոսին, որպեսզի սա «նորապէս այ-

47 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, Սինոդի օրագրություններ, թղթ. 1, վավ. 101, թղթ. 8, վավ. 384, թղթ. 9, վավ. 134։

48 А. Папазян, նշվ. աշխ., էջ 207։

49 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 242։

50 Նույն տեղում, էջ 243։

51 Նույն տեղում։

52 Բ. Հարությունյան, Վարձու աշխատանքը Երևանի խանությունում XVII—XVIII դդ. («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 82—98)։

գի և ծառ տնկեսցէ ի նմա, յորժամ պտուղն հասանիցի և այգի շինեսցէ, այգ-ւոյ կէսն... վանիցն լինիցի և կէսն... Մարկոսինն եղիցի, որքան այգին շէն մնացէ և պտուղ բերցէ. և ի միասին ըսա օրինի հարակաշի ղխարձն հոգաս-ցուք և զպաուղն կիսեսցուք։ Իսկ եթէ չկարիցէ թամամ և կատարեալ այգի շի-նել, վերսաին բոլոր այգետեղն... վանիցն է և եղիցի»[53]։ Ուրեմն, սեփակա-նության իրավունքը մնում էր վանքին, իսկ հողակալն անժամկետ հողօգտա-գործման իրավունք էր ստանում։ Դրա հիմքը, մի կողմից, ամենամյա կիսա-րար հարկատվությունն էր (խոսքը արքունի ընահարկի մասին է), մյուս կող-մից՝ հողն արդյունարեր գարձնելու համար վարձակալի նախնական և հետա-դա աշխատանքը։ Հողակալության այս ձևը սկզբունքորեն չէր տարբերվում Քութալիսի նահանգի «մոնաշենից»[54] և ընդհանուր ոչինչ չուներ ռանչպարու-թյան հետ։

Նշենք նաև, որ հարուստների մոտ «ապաստանած» ընչազուրկներից ոմանք չէին կարող մասնակցել ռանչպարական դաշտային ծանր աշխատանք-ներին։ Այսպես, օրինակ, 1769 թ. քանաքեռցի Ջավահիրը, պարքը մարելու համար, վեց թուման «օգնություն» է ստանում էջմիածնի վանքից և իր ամրողջ ունեցվածքով (այգի, բախչա, հնձանատուն, շինություններ) ցմահ «նվիրվում» նրան՝ իրև վախմ[55]։ Անկասկած, ցմահ «նվիրված» այդպիսի ընչազուրկներից շատերը դառնում էին հողատերերի սպասավոր—ատանուծառաներ։

Արտադրողների առօրյան և հողադասային հարաբերությունները կյան-քում շատ ավելի բազմակողմ ու բազմերանգ էին, քան կարելի է պատկերաց-նել դրանց որոշակի—ընդհանուր եզրերը ներկայացնող ակնհայտ փաստե-րով։ Առավել խոսուն մնալից ելիներ ընդհանուրին ուղեկցող երևույթներին՝ անժամկետ հողակալության, վարձու աշխատանքների, արտադրամիջոցների օգտագործման այլևայլ ձևերի, համապատասխան տերմինների համադիր քըն-նությունը։ Ուշ միջնադարյան և XIX դ. սկզբի արևելահայ գյուղացիության սո-ցիալական, մասամբ՝ տնտեսական վիճակը հետազոտվել է բահրաքյար-յա-բրիքյար-ռանչպար ընդհանուր եզրերով, իրավականը՝ ռայաթ և ռանչպար խմբերով։ Սակայն, մեր կարծիքով, դա տակավին չի կանխում հողօգտագործ-ման և հողադասային հարաբերությունների միջակա ձևերի, դրանց ինչ-ինչ նմանությունների և առանձնահատկությունների ամփոփ լուսաբանման անհրա-ժեշտությունը։

ПО ПОВОДУ ТОЛКОВАНИЯ ТЕРМИНА «РАНЧПАР»

САМВЕЛ АЛЕКСАНЯН

Резюме

В исторической литературе, посвященной аграрным отношениям Армении позднего средневековья и начала нового периода, под персидским термином «ранчпар» обычно подразумеваются крестьяне, лишен-

53 «Կալվածագրեր», կազմեց՝ Հ ա ր. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Երևան, 1941, էջ 92, փաստ. № 73։

54 «Մանաշեն—մոնաշենք» մասին տե՛ս С. Е г и а з а р о в, Исследование по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община. Казань, 1889, с. 203—204.

55 «Կալվածագրեր», էջ 24—25, փաստ. № 14։

ные средств производства, не входившие в состав сельских общин и работавшие исключительно в господских хозяйствах. Значит, этот термин прилагается к крестьянам особой («ранчпарской») категории, что и соответствует исторической действительности.

Не раз упоминалось и «буквальное», более широкое значение термина «ранчпар», объяснимое армянскими словами «еркрагорц» (земледелец), «ашхатавор», «мшак» (трудящийся, рабочий), русскими словами «работник», «несущий бремя», «трудящийся». Однако это лишь толкование слова, вопрос о действительном применении термина в разных его значениях даже не ставился. Более того, есть мнение, будто «ранчпар» стал соответствовать армянскому слову «еркрагорц» только в конце XIX в.

Первоисточники свидетельствуют о применении термина «ранчпар» в разных его значениях еще до второй половины XIX в. Однозначное же толкование его порою приводило к отождествлению совершенно разных явлений и социальных состояний.